


ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE



ԲԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates: 40, 20, 12

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԻՍՏՈՒՆԵՐՈՐԻ ՕՐԵՐԸ

Ապագայի բարեկեցության համար

ՊԵՐ 18

ՏՆՕՐԻՆ - ԽՄԲԱԳԻՐ ՆՆՆԵՆ ԲՈՐՈՍՏԱՆ

Արտոնագրի եզրագրական հառապարտություն

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԳՈՂՈՍ ՓԱՇՏԱՆԻ Մ. ՊԵՐՆԱԿՈՒՆԵՐ

ՊԵՐ 18

ԿՈՆԴԱԿ ՎԵՋԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ

ԳԼՈՐԳ ԾԱՌԱՅ ԵՒՍՈՒՅԻ ՔՐԻՍՏՈՍԻ և անհատների կառուցման Ստուժոյ Եպիսկոպոսական և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայրաքաղաքի Պատրիարք Համազգային նախաձեռնար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Որոյ կաթողիկէ էջմիածնի

Տեսեալ մեր զոգրալի և զերաւազուրկ կացութիւն հոգեւոր օրդւոց Մերոց և զաւելածեալ վիճակ Տաճկահայաստանի, Հայրապետական Կոնդակաւ ի 10 նոյեմբերի 1912 ամի, ընդ համարաւ 1482, Մեք որպէս ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, նշանակեցաք զՎսեմափայլութիւն Ձեր պատգամաւոր և ներկայացուցիչ Մեր առաջի Եւրոպական Պետութեանց, վասն աշխատելոյ և յաջողելոյ զբարեկամութեան վիճակի Տաճկահայ ժողովրդեան Մերոյ ի վերայ հիման ՅԼ ըդ յօդուածոյ վեհաժողովոյն Բերլինի:

Ի կատար անկէ զեզեալն ի վերայ Ձեր զապագային առաքելութիւն մեծ, յուրախութիւն և ի մխիթարութիւն մեր և համայն ազգիս Հայոց: Յընթացս եռանդուն գործունէութեան Ձերոյ վասն յաջողութեան խնդրոյ բարենորոգութեանց տաճկահայաստանի և վասն ապահովութեան Տաճկահայոց, Մեք յուսալից սրտիւ և հոգեկան մխիթարութեամբ իրազեկ լինեալք ի բազմաթիւ պարբերական տեղեկագրոց և ի նամակաց Ձերոց, և տեսանէաք զհեռատես աշխատանս և զգոյշաւոր դիւանագիտական յարաբերութիւնս Ձեր, որպէս ներկայացուցիչ մերոյ և նախագահի Ազգային Պատգամաւորութեան, ընդ նախարարապետս, նախարարս և Դեսպանս Եւրոպական Պետութեանց և ընդ այլ քաղաքական և հասարակական ակնուերգործիչս լուսաւորեալ ազգաց Եւրոպիոյ, որոց քաջ ըմբռնեալ զբարոյական և զտնտեսական հարստահարութիւնս և զհալածանս Տաճկահայոց, խոստովանէին ի լուր աշխարհի վարհրաժեշտութիւն նաստատելոյ ի Տաճկահայաստանի, զկատարեալ ապահովութիւն կենաց, ընչից և պատուոյ Հայոց և զարդարագատ իրաւակորդ վասն յարատե խաղաղութեան թուրքիոյ և Եւրոպիոյ:

Գոհութեամբ դիտեալք աչօք մտացս աստի ի Մայր Աթոռոյ ի Ս. Էջմիածնէս, եթէ որպիսի խորին գիտակցութեամբ, աշխատող կամօք և աննկուն ոգով պաշտպանէիք զիրաւունս և զարդարացի պահանջս Հայոց առաջի պետական քաղաքական պաշտօնէից և գործը

Ապա ըստ միջնորդութեան Ձերում ի 4 նոյեմբերի 1913 ամի կարգեցաք զանգամաւ Ազգային Պատգամաւորութեան Հայոց ընդ լուսամիտ զեկավարութեամբ և նախագահութեամբ Ձերով, և մեք, յուսալով յարգարութիւն Աստուծոյ և ի ճշմարտութիւն նորա, ամենայն հաւատով և զօրութեամբ հոգւոյս օրնեցաք զՁեզ, զանկեզծ և զսրտանունդն գործունէութիւն Ձեր վասն մարդասէր և Սուրբ նպատակի, որ հայի յերջանկութիւն և ի փրկութիւն բազմաչարչար հոգեւոր որդւոց Մերոց սիրելեաց և ի պաշտօնութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Եւ Դուք, Վսեմափայլ Տէր, առլցեալ հայրենասիրական և մարդասիրական մաքուր զգացմամբ, նրբերեցիք յընթացս հնգետասան ամսոց զանձն Ձեր, և շնորհիւ բարձրահիշակութեան և հոգեկան կարողութեան Ձերոց, յաջողութեամբ



ԱԶՆ . ՊՈՂՈՍ ԷՅԷՆՏԻ ԿՈՂՈՍՏԵԱՆ

Կարեւոր կտակներ ըրած է Կրթական և մանուաւնդ Երուսաղիմի վսեմին Գահիրէի Գալստեան վարժարանին և Արաբիի Պոլստեան քաղաքին վարժարանին: Ասոնց մասին ընդարձակ լուսաբանութիւններ պիտի տեսնուին «ՍփինՔՍ» Տարեցոյց - Ուղեցոյցին մէջ:

չաց, նոյնպէս և ի համաժողովս և յազգեցիկ լրագիրս Եւրոպիոյ:

Երախտագիտութեամբ յիշեմք աստուղի նախաձեռնութեամբ Կառավարութեան Ռուսաց և օտանդակութեամբ Եւրոպական Պետութեանց արդէն իսկ ընկալեալ եղև ի Տաճկաց Կառավարութեան ծրագիր բարենորոգմանց Տաճկահայաստանի վասն ընդ փոյթ իրագործելոյ վայն: Զբերկրառիթ իրազեկութիւնս այս Դուք նախապէս աւետեցիք մեզ հեռագրաւ Ձերով ի Մայրաքաղաքէն մը ըրանիս: Ապա ընկալաք նաև ըզպատեցէն ծրագրի բարենորոգութեաց որ է առաջին հանգրուան տղային քաղաքակրթութեան մերոյ և բարգաւաճման Տաճկաստանի:

Արգարե Դուք, արժանաւոր ժառանգ մեծահամբաւ հօր, ազգօգուտ և մարդասէր գործունէութեամբ Ձերով անմահացուցիք ըզդրուատելի անուն Ձեր, և թողիք զշիշտակ բարի և աննկուն յաջողային պատմութեան մերում և հատուաբ զի որպէս այսօր յամենայն կողմանց հոգեւոր զաւակունք մեր յայտնեն զՁերմ համակրանս և զերախտագիտական զգացմունս ի բերանաց առ Ձեզ, նոյնպէս և ապագայ սերունդը Հայոց միշտ և յաւերժ օրհնութեալս և երախտագիտութեամբ յիշեցեն զբարի անուն և զազգային գործս Ձեր:

Աստի և Մեք Մայրաքաղաքի Պատրիարք և Կաթողիկոս Համայն Հայոց, այսու Հայրապետական Կոնդակաւ մերով յայտնեմք Վսեմափայլութեան Ձերում զկատարեալ գոհունակութիւն և զարտազին շքնորհակալութիւնս Մեր, սիրելով լիովին օրհնութիւնս ի վերայ Ձեր, ազնուաշուք գերգաստանիք և սիրատուն զաւակաց Ձերոց:

Օրհնեմք նաև զանգամաւ զգային Պատգամաւորութեան և զամենայն

գործակից Զեր, մաղթելով Տեառնէ պարգևել Զեզ և համայն վաստակաւորաց՝ քաջառողջութիւն և կեանս երջանկաւէտս ընդ յամայր ամսս :

Լիայոյս եմք, զի յետ այսորիկ ևս ի գէպս անհրաժեշտութեան, Դուք որպէս ներկայացուցիչ Մեր, զնոյն ազգագուտ և զմարդասէր գործունէութիւն ունիք շտրունակել վաստակաւորութեան և իրազորման բարենորոգութեանց հայ աբնակ գաւառաց Տաճկաստանի, յան. դորութիւն և յերջանկութիւն բազմատանջ հոգեւոր զաւակաց Մերոց :

Ողջ լերուք պահպանեալ ի խնամք Ս. Հոգւոյն, զորացեալ ի Տէր և յաւէտ օրհնեալ ի Մէջ. Ամէն :

ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի 20 Փետրուարի 1914 ամի ըստ տնտեսի Ռ Ե Կ Գ ի Հայրապետական մերում Գ. ամի յԱրարտեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Վարդապետաց Թ. 258

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍԻՆԵՐՈՒՆ

Արշալոյս յը Աղէքսանդրոյ մէջ ձեռքէ կը ծախուի Տիար Կարապետ Մըրըրլեանին քով, որուն հասցէն է Պապը-Սիտրէ Թիւ 22 :

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ ԻՆՉ ԼՍԵՑ

ՎԱՐԱԳՈՐԻՆ ԵՏԵԻՒՆ (Պարակալան անկզոք)

Երբ Մարգարէի յաջորդ, յերկնից ընտրեալ Շահ Ապպաս իր հօրը փառանկող գահը բարձրացաւ, Արեւու երկրին բարոյականը յօգս ցնդած էր :

Մարգարէին պատուէրները անտես եղած էին և անձնիւր ոք իր ըմբռնութիւն համեմատ կը յարգէր իրաւունքը : Հաշիշարաններն և ափիոնարաններն ցայգ և ցերեկ յի էին յաճախորդներով և զինին գետի պէս կը հոսէր պապակած միւսլիման կոկորդիլներէ վար : Այնպէս որ, զժուար էր չկարծել թէ մարդ ո՛չ թէ Աստուածաստեղծ հաւատացեալներու, այլ սաղայէլաբար էակներու բռնաւայրը կը գտնուէր :

Սակայն Շահ Ապպաս բարեպաշտ էր և Աստուածավախ : Արեւոգողութիւնը իբր հայրուութիւն նկատելով, մահու պատժով իր հպատակներուն արգիլեց ողբից ըմպելեաց գործածութիւնը, և իբր հետեւանք՝ ազնուական և գեներիկ շատեր ինկան դահիճ սուրին տակ : Բայց ո՛րքան աւելի արիւն կը հոսէր, արբեցողութիւնը ա՛յնքան աւելի կը ծաւալէր կայսրութեան մէջ :

Հուսկ ուրեմն, Արքայն Արքայից, որ արիւնարբու բռնապետ մ'ըլլալէ հետո էր, ճարտաւատած, խորհուրդին զիմեց իր մեծ վէզիրին, այր իմաստուն և ժուժկալ, որպէս զի այս անկը ճամբայէն ազատելու հնար մը գտնէ :

— Ըսէ՛ ինձի, ո՛վ խորհրդատուներուս ամենէն փորձառուն և ամենէն յատակամիտը, ինչո՞ւ համար, ի հեճուկս մարգարէին և իմ պատուէրներուս, հը պատակներս զինի խմելէ չեն զարգիր, գիտնալով հանդերձ որ կեանքերնին ալ իմոյ պիտի տան : Ո՛րքան աւելի սպաննեմ, զինո՞վութեամբ և օրինազանցութեամբ բանտարկուածներուն թիւը ա՛յնքան աւելի կ'ստուարանայ : Մի՞թէ ամբողջ Պարսկաստանը անբնակ անա-

պատի՞ պարտիմ վերածել արեւոգողութիւնը արմատախիլ ընելու համար : Ըսէ՛, ո՛վ վէզիր, ինչո՞ւ համար հաւատացեալները գինւոյ բաժակէն չեն հեռանար :

— Որովհետեւ կը սիրեն զայն, ա՛րքայ ամենահօր, ընտրեալը յԱստուծոյ :

— Եւ այդ յիմարները ինչո՞ւ կը սիրեն գինին, որ թէ՛ իրենց մարմինը կ'ըսպաննէ և թէ՛ արքայութեան դուռը կը փակէ իրենց հոգւոյն առջեւ :

— Վէզիրը ուսերը ցննեց և չպատասխանեց :

— Ոսէ՛, շունչանորդի, եթէ ո՛չ ականջներդ կը կտրեմ և տեղը իշուականջներ կը տնկեմ, որպէսզի արար աշխարհ հասկնայ որ դուն չէ թէ խելացի այլ իմարներուն ամենէն յիմարն ես :

— Կամքդ թո՛ղ կատարուի, ո՛վ հաւատքին պաշտպանը շնորհաց արեւը, բարեաց հայրը : Գինը մը շնորհէ՛ քու ծառայիդ՝ խորհելու համար : Պատասխանը վաղն աստու կը բերեմ :

Շահը, զլիսու խիստ շարժուածով մը իր հաւանութիւնը տուաւ և՛ խոստագէտ՝ վէզիրը ձգեց դնաց :

Արեւը հորիզոնին վրայ երեւնալուն պէս, իմաստուն մարդն ալ արքայական պալատին մէջ երեւցաւ, և հաւատացեալներուն հրամանատարէն խոնարհաբար ազակեց միասին իր տունն երթալ : Հո՛ն պիտի տար ուզուած պատասխանը :

Երբ հասան, մեծ վէզիրը արքայն առաջնորդեց վարագոյրով կիսուած փոքրիկ սենեակ մը և խնդրեց որ հաճի վարագոյրին ետեւը նստիլ և մտադրութեամբ հետեւիլ ըլլալիքին, առանց ձայն հանելու, ինչ որ ալ պատահէր, ինքն ալ ծնկազոք նստաւ իր Տէրոջը ոտքերուն առջեւ :

Շատ չանցած, սենեակին մէկ ուրիշ դուռը բացուեցաւ և վէզիրին ծառաներէն մին կոյր մարդ մը մտցուց, ուրիշ մը՝ անարունք մը ներմուծեց և երրորդ մը գրեթէ մերկ և ցուրտէն ու քաղցէն կիսամեռ մուրացիկի մը ճամբայ բացաւ : Շահը, վարագոյրին ետեւէն տեսնելով զուսիք օրրեց տատամտտ, բայց վէզիրը փսփաց :

— Գերագոյն Հրամանատար, աչազուրկը, անտուրքը և բան մը չունեցող մուրացիկանք ես՝ բերել տուի, որպէսզի զինի խմին և զուն հասկնաս թէ ինչո՞ւ կը սիրեն զայն :

Երբ սպասաւորները զինի բերին և՛ հակառակ արքայական արգելքին՝ երեք հիւրերը խմելու սկսան, Շահը դժուարաւ զսպեց իր զայրոյթը և՛ յարգելով իր խոստումը՝ հետաքրքրութեամբ հետեւեցաւ անցած դարձածին :

Հրաւիրեալներուն առաջին պատուքը հազիւ անցած, կոյրը իր բաժակը բարձրացուց յանկարծ և զինւոյ ներքողականի մը սկսաւ :

— Ո՛հ գերազնիւ ըմպելի, որքան ջաղջր՞ես և պատուական, որքան յատակ և մաքուր, զտուած ոսկիին գոյնն ունիս դու, և արծաթափայ մարգարիտներ կը սլանան գաւաթին խորերէն վեր :

— Ոտերբայ սրկայ կոչեց սրունք շունեցողը, դուն՝ ի ծնէ կոյր, ինչպէ՞ս կը յանդգնիս ըսել թէ զինիին գոյնը կը տեսնես : Մեզ ապուշի՛ տեղ կը դնես կոյր : Սուտերուդ վերջ տուր, եթէ ոչ քեզի անանկ կից մը կուտամ ու բազմոցէն թաւալազրոր կ'ըլլաս :

— Կեցցի՛ս աղաղակեց պապուկը հրճուազին ծափահարելով, կիցէ՛ ոտքերուդ տակ ստակեցուր, սուգանքը ես կը վճարեմ, քեզի ալ մուշտակեայ պատմուճան մը կը նուիրեմ :

Ապպաս, վարագոյրին ետեւը, զուսիք ձեռքերուն մէջ առած կը խորհէր : Վէզիրը փչեց անոր ա՛յննիւն ի վար :

— Հիմա հասկցա՞ք թէ գինին ինչո՞ւ կը սիրուի, վասնզի վիշտերը կը

ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲՄԻՔ

ՊՅՐԶԱԿ ԱՐԱՆՅՑ ԵՐ ԿՅՆԱՆՅՑ ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ, ՍԱՆ ԺՈՂՔԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մաքուր, արագ և արաշխարհի և մեր պատրաստ ՔՕՍԹԻԻՄ ՆԵՐԸ անկե անոնց համար, որոնք կուզեն հաշակաւոր հագուստներ ունենայ, Զախաւոր գ, Աերով :

ՍԵՒ ԱՄՊԵՐ

Անկեր, ա՛յս անկեր սեր ու մոյր անկեր Գացե՛ք հեռացե՛ք օսար աշխարհներ : Թո՛ւ էք որ երկինք չիկց յոյս արտասուէ Հարսի մը և մտն խիկց ծիծաղ ցօղէ : Կարօ է սիրսս խիկցի ծիծաղի Կարօ է հոգիս պայծառ երկինքի :

Գանի՛ գիշերներ գիտե՛ք ես անքուն Կրպասան արագեւ երջանիկ ալոյն : Գացե՛ք սեր անկեր գացե՛ք հեռացե՛ք Հոգոյս քախիծի ձեզի հե՛տ սարե՛ք : Կարօ է սիրսս խիկցի ծիծաղի Կարօ է հոգիս պայծառ երկինքի :

Թողե՛ք որ պան մը կեանքի գարեան մէջ Սիրս մ'ալ ես պակեմ սերով վառ անցե՛ք Փախե՛ք մոյր անկեր փախե՛ք հեռացած Վիշտերս անքիւ ձեզի հե՛տ սուս : Կարօ է սիրսս խիկցի ծիծաղի Կարօ է հոգիս պայծառ երկինքի :

Կուզե՛ք որ պատեմ ցարերս քոյր Բանաւ համարձակ սիրսս վիրաւոր, Գրացե՛ք անկեր սեր ու մոյր անկեր Գացե՛ք հեռացե՛ք օսար երկիրներ : Կարօ է սիրսս խիկցի ծիծաղի Կարօ է հոգիս պայծառ երկինքի :

Կ'ուզեմ սեւանի միջ երկինքն աստղազարդ Աստղեր փայլուն պայպուն զուարթ, Աստղիկ մը սիրուն զի սիրսս է սիրսս Ա՛հ խնդրեմ անկեր հեռացե՛ք անկարձ : Կարօ է սիրսս ալոյ յոյսին սիրուն Կարօ է հոգիս կեանքի և արագուն :

Փիլիսոփայ ԿԱՂԱՐՇ

մոյսնէ, Կսկիծը, հոգը, հիւանդութիւնը ու չբաւորութիւնը աշխարհէն հեռացուր այն ստեն կրնաս զինին արդիւն :

Հետեւեալ աստու, մունետիկներ արգելքին բարձուր ծանուցին զօրմանակար բնակչութեան : Նոյն ինքն Շահը անծայրած իր այգեստաններ ունեցաւ Շիրազի և Սպահանի մէջ, և՛ քիչ ատենէն՝ կայսերական մասանը մեծ համբաւ ստացաւ իր բազմատեսակ և ամենաթանկ գինիներով :

Ա. Չ. Պ. Ա. Յ. Ի. Ն.

ԿԱԳ ԵՒ ԿՈՒԻ Ծարաճայնութիւն կը շրջի թէ՛ Գալստեան վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները Մալեան և Նաւարեան կուսակցութիւններ կազմելով իրարու հետ կուտած են, և կըսուի թէ՛ մինչև իսկ ոստիկանու :

Թիւնը միջամտած և երկու աչակերտներ ձեռքաւարած ու հարցաքննութեան ենթարկած է :

Աւելի ստույգ մանրամասնութիւններ հետևեալ :

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ Ի նպատ Էվէրէկի (Կեսարիա) Մերոպեան վարժարանին կազմակերպուած վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ, ինչպէս նամակաւ մը կը ծանուցուի մեզի, առաջիկայ 7 Յունիս 1914 ի Կիրակի օրը՝ կէս օրէն յետոյ ժամը 4 ին, Պէյն - էլ - Սուրէնի Հայկական Սրճարանին մէջ :

Անոնք որ այդ տոմսերէն գընած են, կրնան ներկայ գտնուիլ յիշեալ վիճակահանին :

ԱՆՉԱՍՊԱՆ Աշխարհի մէջ հարստութիւնն ալ շատ անգամ երջանկութիւն չի կրնար պարգևել մարդուն, քանի որ

անոր մէջ կայ նախանձը, անձնասիրութիւնը, գրգռութիւնը, բարկութիւնը և ասոնց բոլոր անախորժ հետեանքները...

Ինչը կը պահէր աշխարհահռչակ մեծահարուստ Մանթաշեանի որդւոյն, որ ելեր անձնասպանութիւն կը փորձէ, ինչպէս կը ծանուցանեն Ռուսահայ թերթերը:

Կայէնի ազնաւին պէս ոճի հրաւէր մը արգօք, թէ'...

Ասկէ կը հետեի թէ' հարստութիւնը իր փեռնակէն գոհ ըլլալուն մէջ կը կայանայ և արգէն ծրան սական առած մը կ'ըսէ թէ' «այն որ գոհ է, հարուստ է...» Պ. Յովսէփ Մանթաշեանի անձնասպանութեան փորձը իր փեռնակէն դժգոհ ըլլալու և ինքզինքը չի կարենալ մխիթարելու հետեանք կրնայ եղած ըլլալ:

ՅԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Մեծ հոգեւոր կը լսենք թէ' Տիար Գեորգ Ա. Պալեան, որդի թերթիս բաղձալատակ աշխատակից Աւետիս Էֆէնտի Պալեանի և հաշուակալ Գահրէի շուրի ընկերութեան, յաղորդեամբ անցնելով վերջնական քննութիւնները, հաշուակալի վկայական ստացած է Եգիպտական կառավարութենէն:

Մեր խոհմագորդ աշխատակցին բարի ժառանգ որդւոյն այս յաջողութիւնը ուրախութեամբ կը ընուզմեզ և կարծէ որ շնորհաւորենք թէ' շանասէր երիտասարդը և թէ' իր գուրգուրոտ ծնողքը:

Մեկնութիւն

Թերթիս բարեկամ և Պոլսոյ ԾԵԻ գէպերէն յետոյ Եգիպտոս հաստատուած և շատ մը ազգային խնդիրներու մէջ գտնուելով համբաւ մը չինած, Տիար Գրիգոր Տամկանեան, յառաջիկայ շաբթու ընտանիքով Պոլիս կը մեկնի. վերջնապէս հոն հաստատուելու համար:

Բարի ճանապարհ կը մաղթենք մեր բարեկամին, որ գէպի Արշալոյսը ունեցած իր համարումը գործով ալ ցոյց տալու համար, ստանձնած է թերթիս Պոլսոյ Ընդհ. Իործակալութիւնը, որ տարակոյս չունինք թէ մեծ յաջողութեամբ պիտի վարէ և իր փութաշնունթեամբ յառավարութեան նոր ուղի մը պիտի բանայ Արշալոյսի քայլերուն առջև:

ՅՕՐՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՏԵ ԷԼ ԵՆԶԵՏԵՆ Փալաքչիի վաճառատան դիմաց Գարթ Բոտալ Լուսանկարներուն տուզինան 10 գրուէն Ե Ա Պ Է Լ Է Ծ

ՆՈՐ ՀԱՄԱԹԵՐՈՒՄ

Ազնիւ Տիար Գնահատումի արտայայտութիւններ ապահովապէս յաղորդեման մը գրականը կենթագրին ու զօրաւոր ազգայինքն են գաղափարի զրօյակիրներու քով ձեռնարկէ մը անբաժան խոչնդոտները

անվեհեր կոխոտել անցնելու համար նախաբաններուն մէջ:

Մաղթելով իմ կողմէ՛ որ գործնական արդիւնքով փոխարինուին մեր առաջադրած նպատակին ակնկալութիւնները, կը փութամ իմ սրտագին շնորհակալութիւններս յայտնել բոլոր անոնց որ իրենց ներկայութեամբ, բերանացի եւ կամ գրաւոր կերպով իրենց համարութեան թանկագին ապացոյցով պատասխանեցին այս հիմնարկութեան համար եղած առաջին կոչին:

Մակայն, միջոց տալու համար որպէսզի այս փափուկ ձեռնարկին բոլոր յարարական մասերը աւելի մշակուին, եւ թէ բացակաները եւս առիթ ունենան մեզի հետ չփոխելու այս գաղափարին շուրջը, խորհրդակցական առաջին ժողովը, որ ծանուցուած էր նախորդ հրաւիրագրով եւ որ փակուեցաւ ներկաներու զուռն ոգեւորութեան մէջտեղ, պիտի շարունակուի այս կիրակի օր եւս, Ձէ Մայիս, Երեկոյան ժամը 7 ին. առաջնորդարանի մեծ սրահին մէջ, հետեւեալ օրակարգով:

Ա. — Նոր անգամակալութիւններ եւ կարծեաց փոխանակութիւն:

Բ. — «Արք ուղղութիւնը» Եկեղեցական եւ կրթական, եւ Կոնստանդնուպոլսոյ թերթերը:

Գ. — Առժամեայ վարիչ Մարմնի մը ընտրութիւնը:

Ջերմապէս կը խնդրուի ուրեմն Ձերնէ ազնիւ Տիար, որ հաճիք առանց այլեւայլի ներկայ ըլլալ այս դարազուրկ ժողովին:

Մտածեցէ՛ք թէ՛ ո՛ր եւ է համայնքի վերակենդանացումի գործը, մանաւանդ մեր պարագային մէջ ուր վերկայէս խոչընդոտներ բազմաթիւ են, և երեսական ճիւղեր կը պահանջէ մենէ ու զոհողութիւնները հարկ է որ բաժնուին ընտանիքի մը բոլոր անդամներուն միջեւ, որոնք ամենքն ալ՝ ինչպէս գիտէք՝ իրենց տեղերը եւ որոշ պաշտօնը ունին:

Ձեր եկեղեցասիրական եւ հայասիրական պահանջներուն անուսով փութացէ՛ք, ազնիւ եղբայր, գալ եւ պարտքերնիդ կատարել, ինչի՛ համար արգիօք այս կոչը հայախոս պարունակուելու է որ կողողուի եւ երբ ժամանակին հողովումին հետ Ձեր տոհմային իրենց իրենց ցանկալի իրագործումը գտնեն եւ Ձեր այսօրուան պահանջները՝ իրենց գոհացումը, անշուշտ ի գործ դրուած գոհաբերութիւններու համեմատութեամբ, այն ատեն է որ մենք մեր վարձատրութիւնը գտած պիտի համարինք ու Գուք ալ, իրաւունք պիտի ունենաք՝ ճակատնիք բաց ու պարծենալով՝ ըսելու ինչպէս երբեմն նաբողոնի Մեծ բանակին դիւցազն վեթերանները, «Ե՛ս ալ այդ գործին մէջ բաժնի ունեցայ»:

Ձերը անձնու էր Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ

ՄԱՆՕԹ. — Սոյն հրաւերին կիրակի օրը պատասխանած են աւելի քան եռասուն կաթողիկէ հայախոսներ, ապահովապէս քաջալերելու համար տիար Ս. Օտապաշեանի օգտակար ձեռնարկները, որոնց մանրամասնութեան հետզհետէ պիտի ծանօթանանք:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահրէ. — Գ. Գ. Գ. — Ձեր ուշադրութիւնը խորապէս գրաւած է այն իրողութիւնը թէ՛ թերթիս Տնօրէնը՝ Տ. Եղիշէ Թորոսեան, ինչո՞ւ զբաղած է «Նորոգ Հայ գոհացեալ» Գահրէի Մեղիքեանի վաղահաս մահովը եւ ինչո՞ւ գրքի ձեւով հրատարակութիւն մը ընելու ձեռնարկած է:

Բացատրենք Ձեր երեք «Գ» ին ալ գոհացում առած ըլլալու համար:

Տիար Եղիշէ Թորոսեան, յետ մահուան քաղաքին Սիթատէլ թաղին մէջ

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ո Ց

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Օրերայի Հրապարակիմ վրայ, Բրիտալ Պատիւն դիմաց:

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտօրէն կը կիրարկուին մեր աշխատանքին մէջ կատարել ճշգրտագոյնութեամբ: Առեւտրական գրասենեակներու յատուկ այլազան մթերքներ, ինչպէս՝ Տարթոն, պիւրեոթոն պղինձէ եւ քառաչուէ քեկարսիք բոյր քեկարսիք եւ այլ որոնք մեր տրամագրութեան տալի կը դասուին դիւրամատչելի գններով:

Impression en Relief

ՀԱՃՅԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՄԸ

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Գ

Պատիւ ունինք ծանուցանելու թէ թիչ օրէն կը բացուի

ՌԷՍՊԻՒՐԱՆ ԱՊՊԱՍԸ

Բիւ վական էլ Պարթա նախկին կրան պառ Ապպասի տեղը ուր մասնագէտ խոհարարի միջոցաւ կը պատրաստուին:

Արեւելեան ճաշակով համագամ խորտիկներ, ինչպէս թանտըր քէպպա, էյուպ քէպպալ եւ այլն, որոնք Գահրէի համար նորութիւններ են:

Նոյնպէս Բաշա եւ Իչկէմպէի Պոլսական ձեւով պատրաստութիւն, ընտիր անուշեղէններ եւն. եւն. եւն:

Վատան ենք որ մեզ դիմող ամենագործ փափկածաշակներն ու կատարելապէս գոհ պիտի մնան, ուրեմն թող հրամաններ Յարգանք:

Ա. Շահրիկեան եւ Ե. Փալամուտեան

ՀԵՌԱՊԻՐ

Կ. Պոլիս 25 Մայիս. — Կերասկոյնք ֆուտբոլից այսօր այն Բոլոր փութախորտիկները, որոնք ստանաւ մեզ մեզուած էին. Առնց մէջ է 35 րդ. Յողումը, որ Սուրբաբիկ իրաւունք կը վերագրանէ Խոհրդարանը լուծելու, առանց կանխաւ ձեռնարկի հաւանութիւնը ստանալու:

Կ. Պոլիս 26 Մայիս. — Ճապիս պէյ յարգաւարակապէս կը ձեռնէ Էսաս փաշայի Բ. դրան հետ յարաբերութիւններ ունեցած ըլլալը:

Բ. Իուրը անկեղծօրէն կը ցանկացայ Արպասիոյ խաղաղացման:

Թուրք օդակաւոր Սեյիւ եւ Գեմալ պեյերը Պոլիս հասան: Առնց ընդունուեցան Պարսպիտիկները եւ Մեծ Եպարֆուսէն, որոնք իրենց յարգութիւնը շնորհակալեցին:

Լոնտոն 26 Մայիս. — Անգլիացի օդակաւոր Կիւսապի Համեյ ա. հետացած է իր սաւառակիկ հետ:

Հոռլ 27 Մայիս. — Էսաս փաշայ յարգաւարած է թէ՛ Երուսաղիմի մը գործը Արպասիոյ գործը ֆրիսոնեայ իշխանի մը սալով, ինչ որ այ ըլլայ անոր անձնակալ արժանիքը: Ա՛յն պարագային՝ յոռու Բրէնս սը վիս գահագործ ըլլայ, Արպասացիներուն ֆուտբոլի պիտի միանայ Եգիպտացի Բրէնս Ֆաշայի վրայ:

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ԳԱՎԱԿԻ ՓՈՂՈՑ ԿԱԿԻՆ ՓԱՍԻԱԼ

Վ. Ա. ՋԱՍՈՒՍՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵԱՐՄԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ
ՓՈՒՓԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենամեծ թիթիկի ճան Գահիրէի
նորահաստատ Մասնաճիւղն է .

ՏՈՒՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարժական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ նահանգներու, Բա
նտայի եւ Հարաւային Ամերիկա
յի համար .

Գաղթականներու համար չափա
ւոր գին :

Աչքի քննութիւնը ճիշտաւ
կը կատարուի տեղւոյս մէջ .

Մանրահասակ ճեղքուածքանց
հասարակ զինեղ Գործակալութեան .

ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ

Փոսթարկի թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

Փոխ - գործակալներ կը փնտռուին

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՎ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

240 ք թրթած .

Գահիրէ, 24 Մայիս 1914

Առաջին պարգև

Թիւ	10898	Ղրջ	Ողջ	4000
»	14038	»	»	400
»	12852	»	»	200
»	6108	»	»	100
»	11846	»	»	»
»	4848	»	»	»
»	13681	»	»	»
»	8418	»	»	»
»	11896	»	»	»

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա
կան դրուշ :

251	1263	1559	1709	2009	2343
2660	3033	3181	3302	4700	4732
5100	5547	5654	5908	6786	7065
7876	7883	8122	8384	8482	8678
9108	9960	10556	10680	10735	
10977	11258	11292	11367	11451	
11491	11851	14053	14509	14697	
14862					

ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնթանէս Այի Փողոցին վրայ
ՇԱՐՋ ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE SINGER MANUFACTURING Co

ՍԻՆԿԸՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շարժ-էլ-Վոլտայի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐԻՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .


400 Կ աւելի վաւայական եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՑԹԻՉ ԹՈՒՐԻՈՑ ՀԱՅԹԱՑԹԻՉ ԱՆԴՂՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԱՅՆԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՑԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ .
ուշագրութիւն դարձնել
իւրաքանչիւր մեքենայի
վրայ ՍԻՆԿԸՐԻ ՆԵՐԿԱՅ
յաւակնելիմ



Ձրի դասեր և նորոգու
թիւններ , յաճախորդաց
տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւնրու
նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ԻՒՆ ԶԱՔ

ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՈՍԿՈՎԻՆԻՆԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇԱՐԱՆ ՎԻՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ՍԻՆԵՏԻՍ ՊՕՂԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ
րաստուին Եւրոպական եւ Արեւել
եան ընտիր կերակուրներ . պան
դուխտ երիտասարդները եթէ ան
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

« Որչաւոյս յի ամբողջ Ռումա
նիոյ գործակալութիւնը ստանձնած
է Տիար Կ. Փիլիպոսեան , որուն
պէտք է զիմել թերթին վերաբը
եալ ամէն գործերու համար .
Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբիկերի գործակալն
է Տիար Միսաք Ա. Սուրբան , ո
րուն պէտք է զիմել թերթին վե
րաբերեալ բոլոր գործերու համար .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԻՒՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Եւրոպա Ապրիլ Ել Աղիզ
Ապրիլի Իւրաքանչիւն մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մ
ունենալու համար զանազան տեղեր զի
մած ու զփոս մնացած են , թող ան
շամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր
ուիլոր իմէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն . կանխավճարը
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ
ուելու փոխարդիւնուն համար , նը
պատարար ամբողջ պիտի ըլլայ .
Ապառիկ ապագրանքները նկատու
ղութեան շին աստուիլը , եւ անոնք որ
ինծի կը զիմեն , զիւրաւ կրնան ըմբռ
նել ապառիկին տարբերութիւնները .
Թէ գործի մտքութեան եւ թէ զի
նեւրու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԻՄԱՆՈՒՑՈՒՄ

Ողէքանդրիոյ և Գաւառներու
համար գործակալներու պէտքը
կայ փափաքողները կրնան զիմել
« Որչաւոյս յի լաւագորութեան հաս
ցին .

Արսովաստի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇՎԼՈՅՍ Լրագոյն

GRAND BAR ABBAS

ՇԱՐՋ ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆԱԽԿԻՆ ՖԻԱՇԻՆ ՏԵՂ

ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ

Անցեալ Մայիս 1 ին ճեղի ունեցաւ բացուած կուսակալ Պառ Ապպասի . որ կոչուած է ըլլալ ընտանեկան հարաւայի մը . ճոխ եւ արեւմտաւոր
սպասներով կահաւորուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԵԱԼ , ԱՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՆԱԿՈՐ .

Կը հրաւիրուին Հայ ընտանիքները , յետ այսու իրենց ժամագրովայրը ընտրել կ'ան Պառ Ապպասը վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան իրենց ընծայե
լի նախապատուութենէն .

Կուսակալ Ապպասը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ և զարեջուրներուն ամեն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն
պիտի տրուի « ԼՕՎԷՆ ՊՐԱԻՆ » տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած եւ համբաւեալ է .

Օ՛ն ուրիմն . փութացէք գէպի Պար Ապպաս .

Ս . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ